ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ԲԵԼԱՌՈՒՍԻ ԲԱՐՁՐԱԳՈՒՅՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ ԿԱՌԱՎԱՐՄԱՆ ՀԱՄԵՄԱՏԱԿԱՆ ՎԵՐԼՈՒԾՈՒԹՅՈՒՆ

Հարությունյան Նազիկ
Երևանի պետական համալսարան,
Հայաստան

Համառոտ ներածական: Տարբեր երկրների կրթության համակարգերի ուսումնասիրությունը, նրանց կառավարման համեմատական վերլուծությունը լուծում է երկու կարևոր խնդիր՝ ճանաչողական և առաջավոր փորձի փոխանակման:

Սույն հոդվածում մեկնաբանվում են բարձրագույն կրթության կառավարման աշխարհում երեք ամենատարածված և կիրառվող մոդելները, որից հետո տրվում է Հայաստանի և Բելառուսի բարձրագույն կրթության կառավարման համեմատական վերլուծություն՝ բոլոնյան գործընթացի համատեքստում:

Հիմնախնդիրը: Վերջին ժամանակներում չափազանց կարևոր ու արժեքավոր և խիստ արդիական են աշխարհի տարբեր երկրների կրթության համակարգերի համապարփակ ուսումնասիրությունները, քանի որ դրանք լայն հնարավորություններ են ստեղծում առաջավոր փորձի փոխանակմանը՝ նպաստելով Համեմատական մանկավարժության զարգացմանը:

Հետազոտության նպատակը: Սույն հետազոտության նպատակն է համեմատական վերլուծության ենթարկել ԵԱՏՄ անդամ երկու երկրների՝ Հայաստանի և Բելառուսի բարձրագույն կրթության կառավարման համակարգերը՝ ներկայացնելով նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները:

Հիմնախնդրի վերաբերյալ գրականության վերլուծություն: Աշխարհի տարբեր երկրների բարձրագույն կրթության կառավարման վերաբերյալ կան եվրոպական, ռուս և հայ մանկավարժ-գիտնականների բազմաթիվ ուսումնասիրություններ, որոնք անդրադարձել են ինչպես առանձին երկրների, այնպես էլ տարբեր երկրների բարձրագույն կրթության կառավարման համակարգերին՝ տալով դրանց համեմատական վերլուծությունը: Նրանց թվում կնշեինք՝ Резник С.Д., Филиппов В.М., Бермус А.Г., Нестеров А.П., Скотт П., Alberto Amaral, Glen A. Jones and Berit Karseth, Vulfson B. L., Michaela M. & Shreya P., Ն. Հարությունյան, Ա. Գրիգորյան, Յու. Սարգսյան, Ա. Բուդաղյան և այլք: Նրանցից յուրաքանչյուրի խոսքը նորովի մոտեցում է հիմնախնդրին:

Հետազոտության նորույթը: Առաջին անգամ Հայաստանում կատարվում է մեծ ու համապարփակ ուսումնասիրություն ԵԱՏՄ անդամ չորս երկրների՝ Հայաստանի, Ռուսաստանի Դաշնության, Բելառուսի և Ղազախստանի բարձրագույն կրթության կառավարման համեմատական վերլուծություն՝ վեր հանելով նմանություններն ու տարբերությունները, ձեռքբերումներն ու խնդիրները: Սույն հոդվածում տրվում է միայն Հայաստանի և Բելառուսի բարձրագույն կրթության կառավարման համեմատական վերլուծությունը:

Բանալի բառեր: *Բարձրագույն կրթություն, կառավարման համակարգ, կառավարման մոդել, գլոբալիզացիա, կրթական բարեփոխումներ, բոլոնյան գործընթաց:*

Հիմնական նյութի շարադրանքը: Այսօր անառարկելի է մարդկային կապիտալի դերի աճը տնտեսական և գիտատեխնիկական զարգացման գործընթացներում, հետևաբար դժվար չէ նկատել, որ կրթությունը դառնում է ժամանակակից հասարակության զարգացման գլխավոր շարժիչ ուժը: Կրթությունն այսօր ակտիվ գիտելիքների արտադրություն է, որն ապահովում է հասարակության զարգացումը բոլոր ուղղություններում:

«Աշխարհի շատ երկրներում,– գրում են Ս. Դ. Ռեզնիկը և Վ. Մ. Ֆիլիպովը,– կրթությունը ներառվել է պետական հիմնական առաջնահերթությունների շարքում: Նրանցից շատերն այսօր ձեռնամուխ են եղել ռադիկալ փոփոխությունների՝ ձգտելով ստեղծել բարձրագույն կրթության ճկուն համակարգ, որը գլոբալ մրցակցության պայմաններում կպատասխանի նոր պահանջներին» [5; 15]:

Ա. Գ. Բերմուսի կարծիքով «ժամանակակից աշխարհում բարձրագույն ուսումնական հաստատությունների գործունեության պատասխանատվությունն ու ռիսկերը նույնիսկ գերազանցում են կոմերցիոն կառույցների համապատասխան ռիսկերը» [3; 368]:

Աշխարհում ձևավորվել են բարձրագույն կրթության համակարգային կառավարման տարբեր մոտեցումներ և մոդելներ, որոնք տարբեր ժամանակներում իրենց գործնական կիրառությունն են գտել տարբեր երկրներում: Կուզենայինք համառոտ ներկայացնել այդ մոդելները: Դրանք են՝ մայրցամաքային եվրոպական, անգլո-սաքսոնական և գերմանական կամ հումբոլդտյան:

Մայրցամաքային եվրոպական մոդելի հիմքում ընկած է այն սկզբունքը, որ «բարձրագույն կրթությունն առավել, քան կարևոր է, որ այն գտնվի անկախ կառույցների ձեռքում» [8; 281]:

Մայրցամաքային Եվրոպայում համալսարանը դիտարկվել է որպես պետական կառույց, որը համարվել է ազգային պետության և պետականության զարգացման տնտեսական, սոցիալական և մշակութային հիմնական գործիքը: Այն եղել է պետության կողմից վերահսկելի կառույց: Մինչև վերջին քառորդ դարը մեծ թվով եվրոպական պետություններում համալսարաններն ամբողջովին ֆինանսավորվել և կառավարվել են պետության կողմից: Այս մոդելի դասական օրինակը Ֆրանսիան է:

Իսկ ի՞նչ սկզբունքի հիման վրա է ձևավորվել անգլո-սաքսոնյան մոդելը: Ա. Ամարալը գրում է. «Բարձրագույն կրթությունն առավել, քան կարևոր է, որպեսզի այն վստահվի ազգային պետության քաղաքական քմահաճություններին» [8; 282]: Ըստ այս մոդելի՝ պետք է ապահովել բարձրագույն կրթության կայուն զարգացում՝ շուկայի պահանջներին համապատասխան, և որ բարձրագույն կրթությունը չպետք է որևէ ազդեցության ենթարկվի պետության քաղաքական կուրսի հնարավոր փոփոխություններից:

Նշված մոդելի հիմքում ընկած այս չափազանց կարևոր գաղափարն այն կարևոր գործոնն է, որն ապահովում է բուհերի ինքնավարությունը, ինքնակառավարումը և ակադեմիական ազատությունները, որոնք չափազանց կարևոր դեր ունեն բուհերի կայուն զարգացման և առաջընթացի համար: Այս մոդելը որդեգրել են Մեծ Բրիտանիան, ԱՄՆ-ն, Կանադան և Ավստրիան:

Հաջորդը գերմանական կամ հումբոլդտյան մոդելն է: Ի՞նչ գաղափար է ընկած այս մոդելի հիմքում: Դա ազատ իրականացված գիտահետազոտական գործունեության և կրթության միասնության ապահովումն է: Այսօր այս գաղափարն ամենակարևոր պահանջն է գիտության և կրթության զարգացման գործում, որովհետև ապահովում է գիտական նվաճումների կիրառումը ոչ միայն տնտեսության, առողջապահության, այլ նաև կրթության զարգացման գործում: Այս գաղափարն ամրագրված է նաև Բերգենյան Կոմյունիկեում: Այս մոդելի հեղինակը Վիլհելմ ֆոն Հումբոլդտն է (19-րդ դար, Գերմանիա): Բացի Գերմանիայից՝ այն կիրառվում է նաև Ավստրիայում և Շվեյցարիայում:

Բարձրագույն կրթության կառավարման այս երեք մոդելներն էլ այսօր կիրառվում են աշխարհի տարբեր երկրներում՝ տալով տարբեր արդյունքներ:

Կրթության կառավարման այս տեսական վերլուծության համատեքստում ներկայացնենք Հայաստանի և Բելառուսի բարձրագույն կրթության կառավարման առանձնահատկությունները և պարզենք, թե կրթության կառավարման ո՞ր մոդելին են նախապատվությունը տվել նրանցից յուրաքանչյուրը, և վերջապես արդյո՞ք արդարացրել են այդ դիրքորոշումները բարձրագույն կրթության

ժամանակակից մարտահրավերներին դիմակայելու և իրենց երկրում մրցունակ ու առաջանցիկ որակյալ բարձրագույն կրթություն ապահովելու գործում:

Այս բոլոր հարցերի պատասխանները տալու նպատակով ստորև կներկայացնենք Հայաստանի և Բելառուսի բարձրագույն կրթության կառավարման համեմատական վերլուծություն:

Այսօր Հայաստանի և Բելառուսի համար պետական և ազգային կարևորագույն խնդիրներից մեկը կրթության համակարգի պահպանումն ու զարգացումն է, նրա գիտական կառավարումը, համապատասխանեցումը միջազգային չափանիշներին և նրա մրցունակության ապահովումը միջազգային ասպարեզում: Այս ամենի իրականացումը, իհարկե, պահանջում է կրթության համակարգի լուրջ բարեփոխումներ, որին գնացել են և՛ Հայաստանը, և՛ Բելառուսը:

«Յուրաքանչյուր երկրի կրթության արդիականացման և զարգացման համար անհրաժեշտ է ինտեգրվել կրթական միջազգային գործընթացներին՝ նպատակ ունենալով բարելավելու կրթության որակը, համապատասխանեցնելու միջազգային չափանիշներին և այն դարձնելու առավել մրցունակ և գրավիչ: Սրան են միտված Հայաստանում բարձրագույն կրթության ոլորտում իրականացվող բարեփոխումները, որոնց վերջնական նպատակը դինամիկ զարգացող հասարակության ձևավորումն է, որը բնորոշվում է հոգևոր, իրավական, մասնագիտական, մշակութային մակարդակով, քաղաքակրթության ձեռքբերումների խելամիտ օգտագործմամբ»,– գրում են Ն. Հարությունյանը և Ա. Գրիգորյանը [1; 5]:

Ե՛վ Հայաստանը, և՛ Բելառուսն ակտիվորեն մասնակցում են միջազգային կրթական գործընթացներին՝ կատարելով համապատասխան քայլեր բարձրագույն կրթության եվրոպական միասնական տարածք ինտեգրվելու համար:

Հայաստանի Հանրապետությունը, 2005 թվականին ստորագրելով Բերգենի Կոմյունիկեն, միացավ բոլոնյան գործընթացին և պարտականություններ ստանձնեց բարեփոխելու բարձրագույն կրթության համակարգը տարբեր ուղղություններով, որոնցից մենք կանգ կառնենք բուհերի կառավարման հարցի վրա:

2004-2005 ուսումնական տարվանից Հայաստանի բոլոր բուհերն անցան բարձրագույն կրթության եռաստիճան համակարգի՝ բակալավրիատ, մագիստրատուրա, ասպիրանտուրա (դոկտորանտուրա)՝ վերափոխելով ուսումնական պլանները, ծրագրերը, ձեռնարկները, հաշվի առնելով բարձրագույն կրթության եվրոպական չափանիշները:

2005 թվականին փոխվեց նաև բուհերի կառավարման համակարգը: Հիմք ընդունելով 2004 թվականին ընդունված «Բարձրագույն և հետբուհական մասնագիտական կրթության մասին» ՀՀ օրենքի 6-րդ հոդվածը՝ 2005 թվականի մայիսին Հայաստանի բոլոր բուհերում ձևավորվեցին բուհի կառավարման բարձրագույն մարմիններ՝ խորհուրդներ, որոնց կազմում ընդգրկվեցին ինչպես դասախոսներ և ուսանողներ (25-ական %), այնպես էլ Հայաստանի Կառավարության և ՀՀ ԿԳ նախարարության ներկայացուցիչներ (նույնպես 25-ական %):

Համալսարանական խորհուրդը համագործակցային և կոլեգիալ մարմին է: Ոչ միայն բուհի դասախոսները, այլև ուսանողները, պետությունը և տնտեսության ու հասարակության ներկայացուցիչներն իրենց մասնակցությունն են բերում բուհի կառավարման հարցերում: Խորհրդում հարցերը քննարկվում են և որոշումները ընդունվում միասնաբար՝ ձայների պարզ մեծամասնությամբ:

Համալսարանական խորհուրդը մրցութային կարգով ընտրում է բուհի ռեկտորին, որը՝ որպես գործադիր մարմին, տարին մեկ հաշվետվություն է տալիս խորհրդին: Ըստ բուհի կառավարման նոր համակարգի՝ համալսարաններին տրվեցին որոշ ինքնավարություն և ակադեմիական ազատություններ, սակայն պետության ձեռքին մնացին վերահսկողական մեծ լիազորություններ, որոնցով պետությունը ներգործում է բուհերի ազատ գործունեության վրա (ֆինանսավորում, լիցենզավորում, հավատարմագրում, վերահսկողություն, կառավարման գործընթացին մասնակցություն):

Բուհի կառավարման նոր համակարգը փոխեց ներհամալսարանական կառավարման սկզբունքները, գործառույթները, մեթոդներն ու ոճերը:

2014 թվականից փոխվեց Հայաստանի բոլոր բուհերի կազմակերպական-իրավական ձևը, և բուհերը դարձան հիմնադրամներ: Համալսարաններում ձևավորվեցին հոգաբարձուների խորհուրդներ, որոնք համարվում են բուհի կառավարման բարձրագույն մարմիններ: Նրանց կառուցվածքը նման է համալսարանական խորհուրդների կառուցվածքին: Սակայն որպես հիմնադրամներ համալսարանները ձեռք բերեցին որոշ լիազորություններ:

Համալսարանների հիմնադրամներ դառնալը մեծացրեց ուսանողների ակտիվ մասնակցությունը բուհի կառավարման համակարգում: Նրանք ներառված են ոչ միայն հոգաբարձուների խորհրդում (25 %), այլև բուհի գիտական խորհրդում (25 %) և ֆակուլտետների ու կենտրոնների գիտական խորհուրդներում (25 %):

Եթե համեմատական տանենք Հայաստանի՝ մինչ 2005 թվականը բուհերի կառավարման հին համակարգի և նորի միջև, ապա ակնառու է տարբերու-

թյունը թե՛ բուհի ինքնավարության, ակադեմիական ազատությունների և թե՛ լիազորությունների առումով: Եվ հարց է առաջանում՝ Հայաստանի բուհերի կառավարման այս նոր համակարգը բարձրագույն կրթության կառավարման աշխարհում գործող ո՞ր մոդելին է ավելի հարում կամ ամբողջովին համապատասխանում: Պատասխանը միանշանակ է: Հայաստանի որդեգրած բարձրագույն կրթության կառավարման նոր համակարգը տեղավորվում է բարձրագույն կրթության կառավարման Մայրցամաքային եվրոպական մոդելի շրջանակներում՝ որոշ չափով աղերսվելով Հումբոլդտյան մոդելին:

Իսկ ինչպիսի՞ն է Բելառուսի բարձրագույն կրթության կառավարման համակարգը:

Ի տարբերություն Հայաստանի՝ Բելառուսը բոլոնյան գործընթացին միացել է բավականին ուշ՝ 2015 թվականի մայիսի 14-ին Երևանում տեղի ունեցած Եվրոպական բարձրագույն կրթության տարածքի նախարարական գագաթնաժողովի և բոլոնյան գործընթացի 4-րդ քաղաքական ֆորումի ժամանակ: Առաջին անգամ Բելառուսը հայտը ներկայացրել էր 2011 թվականին, որը մերժվել էր 2012 թվականի՝ Կոպենհագենում հանդիպման ժամանակ, որտեղ փաստվել էր, որ Բելառուսը չի հետևում Եվրոպական բարձրագույն կրթության միասնական տարածքի այնպիսի սկզբունքներին, ինչպիսիք են բուհերի ակադեմիական ազատությունը, ինստիտուցիոնալ ինքնակառավարումը և ուսանողության մասնակցությունը բուհի կառավարմանը:

«Բելառուսական բուհերի սահմանափակ ինքնավարությունը և խախտված ակադեմիական ազատությունները հնարավորություն չեն տալիս նրանց հետագա զարգացման և կրթության որակի բարձրացման համար: Կարելի է նշել նաև պետական խիստ վերահսկողությունը բուհերի վրա» [6; 29]:

Համաշխարհային բանկի փորձագետ Ֆիլիպ Ալտբախը գրում է. «Բուհերի կառավարման ապակենտրոնացումն ու ժողովրդավարացումը ենթադրում են ռեկտորների ընտրություն բուհի կառավարման կոլեգիալ մարմնում, ֆինանսական, կադրային ինքնավարություն և ակադեմիական ազատություններ» [9; 336]:

Ի նմանություն Հայաստանի՝ Բելառուսում նույնպես գործում է բարձրագույն կրթության եռաստիճան համակարգ՝ բակալավրիատ, մագիստրատուրա և ասպիրանտուրա (դոկտորանտուրա):

Ի տարբերություն Հայաստանի՝ Բելառուսում պետական բուհերի ռեկտորներին նշանակում և ազատում է երկրի նախագահը՝ սահմանված կարգով, իսկ

մասնավոր բուհերի կառավարիչներին հիմնադրի առաջադրմամբ նշանակում կամ ազատում է Կրթության նախարարությունը:

Բելառուսի բարձրագույն ուսումնական հաստատության կառավարման ինքնավար մարմինը բուհի խորհուրդն է, որի ղեկավարը բուհի կառավարիչն է՝ ռեկտորը: Այս խորհրդին համապատասխանում են Հայաստանի բուհերի գիտական խորհուրդները:

Բելառուսում բուհի խորհրդի լիազորությունները, կազմը և գործունեությունը սահմանվում են Բելառուսի կրթության նախարարության կողմից հաստատված «Ուսումնական հաստատության խորհրդի մասին» կարգով: Բուհի խորհրդի անդամների 25 %-ը ուսանողներն են, իսկ 75 %-ը՝ ուսումնական հաստատության ստորաբաժանումների ղեկավարների, մանկավարժական կազմի ներկայացուցիչներ, ինչպես նաև տեղական կառավարման մարմինների, պետական և այլ մարմինների, պատվիրատու կազմակերպությունների, հասարակական միավորումների ներկայացուցիչներ: Խորհրդի գործունեության ժամկետը 5 տարի է:

Փաստենք, որ Բելառուսի բուհերում կարո՛ղ են ձևավորվել հոգաբարձուների խորհուրդներ, ինքնավար այլ մարմիններ՝ Բելառուսի նախագահի որոշմամբ: Սա խոսում է այն մասին, որ Բելառուսի բուհերի կառավարումն ապակենտրոնացված չէ. բուհերը չեն անցել ինքնակառավարման, ինքնավարությունն ու ակադեմիական ազատությունները թույլ են, ռեկտորները չեն ընտրվում, այլ նշանակվում են երկրի նախագահի կողմից: Բուհի կառավարման ձևը կենտրոնաձիգ-ուղղահայաց է, ոչ թե՝ կենտրոնախույս-հորիզոնական (ժողովրդավարական):

Եվ այստեղ առաջանում է երկրորդ հարցը: Իսկ Բելառուսի բուհերի կառավարման համակարգը բարձրագույն կրթության կառավարման աշխարհում գործող ո՞ր մոդելին է հարում կամ ամբողջովին համապատասխանում: Այստեղ երկու կարծիք չի կարող լինել: Միանշանակ համապատասխանում է Մայրցամաքային եվրոպական պետականամետ մոդելին: Սակայն փաստենք, որ 2015 թվականին միանալով բոլոնյան գործընթացին՝ Բելառուսը մշակել է բարեփոխումների իրականացման ճանապարհային քարտեզ, սահմանել ժամանակացույց և ներկայումս կատարում է իր առջև դրված խնդիրները:

Ե՛վ Հայաստանում, և՛ Բելառուսում իրականացված կրթական բարեփոխումների շնորհիվ որոշ չափով մեծացել են բարձրագույն ուսումնական հաստատությունների ինքնավարությունն ու պատասխանատվությունը, ընդլայնվել է քաղաքացիական հասարակության մասնակցությունը, նպաստավոր

պայմաններ են ստեղծվել բարձրագույն կրթության համակարգի և գործարար հանրության արդյունավետ երկխոսության համար: Սակայն կառավարման արդյունավետ համակարգ ունենալու, առաջանցիկ և որակյալ բարձրագույն կրթություն ապահովելու համար դեռևս կան բազմաթիվ հիմնախնդիրներ, որոնք կարոտ են լուծման:

Եզրակացություն: Հիմնախնդրի ուսումնասիրության արդյունքները հանգեցրին այն եզրակացության, որ տարբեր երկրների կրթության համակարգերի կառավարման վերաբերյալ ցանկացած ուսումնասիրություն իր ներդրումն է բերում Համեմատական մանկավարժության զարգացմանը՝ բացահայտելով տարբեր երկրների առաջավոր փորձն ու խնդիրները:

Օգտագործված գրականության ցանկ

1. Հարությունյան Ն., Գրիգորյան Ա., Կրթության զարգացման և որակավորման խնդիրները, «Մանկավարժական միտք», Երևան, 2013, 1-2:
2. Սարգսյան Յու., Բուդաղյան Ա., Բոլոնիայի գործընթացը Հայաստանում. Ուղեցույց, Երևան, «Անտարես», 2008, 74 էջ:
3. Бермус А.Г., Модернизация образования: философия, политика, культура, М., 2008, 382 с.
4. Нестеров А.П., Система образования Республики Беларусь в цифрах, Минск, 2018, 64 с.
5. Резник С.Д., Филиппов В.М., Управление высшим учебным заведением, М., 2011, 767 с.
6. Система высшего образования Беларуси: состояние, проблемы и направления реформирования, Минск, 2014, 35 с.
7. Скотт П., Глобализация и университет, Вестник высшей школы, 2009, №4.
8. Amaral Alberto, Glen A. Jones and Berit Karseth, Governing Higher Education: National Perspectives on institutional Governance, the Netherlands, 2002.
9. Altbach Philip G. and Jamil Salmi (Ed.) The Road to Academic Excellence. The Making of World-Class Research Universities. Washington: The World Bank, 2011, 339 p.
10. Michaela M. & Shreya P., Quality management in higher education: Developments and drivers, Results from an international survey, Paris, France, 2017.

СРАВНИТЕЛЬНЫЙ АНАЛИЗ УПРАВЛЕНИЯ ВЫСШЕГО ОБРАЗОВАНИЯ АРМЕНИИ И БЕЛОРУСИ

Арутюнян Назик

Ереванский государственный университет,

Армения

Аннотация

Сегодня в мире чрезвычайно актуальны и представляют высокую ценность исследования, содержащие сравнительный анализ управления систем образования разных стран.

Эти исследования решают две важные задачи: познавательную и обмен передовым опытом. Данные исследования однозначно способствуют развитию сравнительной педагогики.

В статье интерпретируются три наиболее популярные и применяемые в мире модели управления высшим образованием: континентальная европейская, англо-саксонская и гумбольдтская, представляя идеи, лежащие в их основе, которыми они отличаются друг от друга.

Затем в статье был проведён сравнительный анализ систем управления высшим образованием двух стран-членов ЕАЭС – Армении и Беларуси. Были представлены сходства и различия, достижения и проблемы этих систем.

В частности, в статье представлены реформы, осуществлённые как в системе управления высшим образованием Армении, так и в Беларуси в контексте Болонского процесса.

В результате сравнительного анализа был сделан вывод, согласно которому системы управления высшим образованием, принятые в Армении и Беларуси, входят в рамки континентально-европейской модели управления высшим образованием, и в некоторой степени взаимосвязаны с гумбольдтской моделью.

Это говорит о том, что в системе высшего образования как Армении, так и Беларуси всё ещё необходимы серьёзные реформы как в вопросах улучшения качества образования, так и в вопросах демократизации управления.

Ключевые слова: *высшее образование, система управления, модель управления, глобализация, реформы образования, Болонский процесс.*

Список использованной литературы

1. Арутюнян Н., Григорян А., Проблемы развития образования и квалификации, Педагогическая мысль, Ер., 2013, N 1-2.
2. Саргсян Ю., Будагян А., Болонский процесс в Армении, Ер., 2008.
3. Бермус А.Г., Модернизация образования: философия, политика, культура, М., 2008, 382 с.
4. Нестеров А.П., Система образования Республики Беларусь в цифрах, Минск, 2018, 64 с.
5. Резник С.Д., Филиппов В. М., Управление высшим учебным заведением, М., 2011, 767 с.
6. Система высшего образования Беларуси: состояние, проблемы и направления реформирования, Минск, 2014, 35 с.
7. Скотт П., Глобализация и университет, Вестник высшей школы, 2009, №4.
8. Амарал А., Глен А., Джонс и др., Управление высшим образованием, Нидерланды, 2002.
9. Альтбах Филипп Дж. и Джамиль Салми, Путь к академическому превосходству, Вашингтон, 2011.
10. Микаелла М., Шрейя П., Управление качеством высшего образования, Париж, 2017.

COMPARATIVE ANALYSIS OF HIGHER EDUCATION MANAGEMENT IN ARMENIA AND BELARUS

Nazik Harutyunyan
Yerevan State University, Armenia

Summary

The comparative analysis of higher education management in different countries has become extremely relevant and highly valuable in the world today. These studies address two important

issues: i.e. the exchange of cognitive and advanced experience and definitely contributes to the development of Comparative Pedagogy.

The article discusses the three most common and applicable models of higher education management in the world: Continental European, Anglo-Saxon, and Humboldtian, presenting the ideas underlying those that are different from each other.

Furthermore, the article compares the higher education management of the two EAEU member states - Armenia and Belarus. The similarities and differences, achievements and problems of the management system are presented.

In particular, the article presents the reforms implemented in both Armenia and Belarus in the context of the Bologna Process.

The comparative analysis concluded that the higher education management system adopted by both Armenia and Belarus fits within the framework of the Continental European model of higher education, with some reference to the Humboldt model.

This shows that both Armenia and Belarus have serious reforms in both the quality of education and the democratization of management.

Keywords: *higher education, management system, management model, globalization, education reforms, Bologna process.*

References:

1. Harutyunyan N., Grigoryan A., The problems of the Education Development and Qualification, Pedagogical Thought, Yerevan, 2013, N1-2
2. Sargsyan Y., Budaghyan A., The Bologna Process in Armenia. Yerevan, 2008
3. Bermus A. G., Modernisation of Education, M., 2008.
4. Nesterov A. P., Education System of Belarus in numbers. Minsk, 2018
5. Reznik S. D., Filippov V. M., Management of Higher Scool, M., 2011
6. System of Higher Education of Belarus, Minsk, 2014
7. Scott P., Globalisation and University, Bulletin of Higher School, 2009, N 4
8. Amaral Alberto, Glen A. Jones and Berit Karseth, Governing Higher Education: National Perspectives on institutional Governance, the Netherlands, 2002.
9. Altbach Philip G. and Jamil Salmi (Ed.) The Road to Academic Excellence. The Making of World-Class Research Universities. Washington: The World Bank, 2011. 339p.
10. Michaela M. & Shreya P., Quality management in higher education: Developments and drivers, Results from an international survey, Paris, France, 2017.

Материал был представлен и отправлен на рецензию: 18.09.2019
Принято к публикации: 30.09.2019
Рецензент: канд. пед. наук, доцент Арменуи Ашикян

The material was submitted and sent to review: 18.09.2019
Was accepted for publication: 30.10.2019
Reviewer: Assoc. Prof., Ph.D. Armenuhi Ashikyan